ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԷՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1908/9 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՅ։ *)

Զեկուցում Նորին Վեհափառութեան։ Կրճատումներով կարդացուել է 26-ին սեպտեմբերի՝ տարեկան հանդէսին։

Անցեալ 1908/9 ուսումնական տարին սկսուել է 1908 թուի սեպտեմբերի 1-ին և տեւել է մինչև 1909 թուի 15-ը մայիսի, երբ ուսուցչական կազմի հրաժարման պատճառով ճեմարանը փակուել է։

Ուսումը սկսուել է 9 ին սեպտեմբերի և շարունակուել է —Գ-րդ, Դ-րդ ու Ե-րդ դասարաններում մինչև 27-ը ապրելի, Զ-րդում մինչև 21-ը մարտի և Ա-ին ու Բ-րդ լսարաններում մինչև 17-ը ապրիլի։

Աշխատաւոր օրեր, չհաշուած ընդունելութեան և վերջնական քննութիւնների օրերը, եղել են 146 կամ տարուայ 40% ընդամենը։ Քննութիւնները տեւել են մայիսի 1-ից մինչև 15-ը։ Զ-րդ դասարանի ընդհատուած քննութիւնները և լսարանցիներից մեծ մասի քննութիւնները յետաձգուել են մինչև սեպտեմբեր։ Գ-րդ, Դ-րդ և Ե-րդ դասարանների սանները փոխադրուել են տարեկան թուանշաններով։

Սանները հեռացել են ճեմարանից մայիսի առաջին օրերը, բացի վեցերորդցիներից։

Տարուայ սկզբում ճեմարանում եղել է 152 սան. ընդունուել են տարուայ մէջ 10 հոգի, և արձակուել կամ հեռացել են 12 (7½%), այնպէս որ ամբողջ տարին եղել է 150 հոգի, որոնցից 18 երթեւեկ և 132 դիշերօթիկ։ Տարուայ վերջը հեռացել են կամ արձակուել 22 սան (14%), և նոր ուսումնական տարեշրջանը անցել են 128 սան կամ սկզբնական թուի 84,2%։

Սանները տարուայ մէջ զետեղուած են եղել դպրոցական բաժնի 4 դասարաններում և մասնագիտական բաժնի 2 լսարաններում հետեւեալ չափով.

Գ-րդ	դասարանում	24	հոգի	15%
Դ-րդ	»	41	»	25%
Ե-րդ	»	35	»	22%
Զ-րդ	»	27	»	17%
Ա-ին	լսարանում	18	»	11%
Բ-րդ	»	17	»	10%
		162		

*) Ցանկանուած է խմբագրութեանս տալ անփոփոխ. շատ կէտերին համաձայն չենք։ Խմբ.

Ըստ հպատակութեան սանները եղել են.

Ռուսաստանցի	126 հոգի	78%
Տաճկաստանցի	27 »	17%
Պարսկաստանցի	9 »	5%

Ռուսաստանի թեմերից առաջին տեղը բռնում է Երևանինը, որի կենդրոնում է գտնուում ճեմարանը. նա տուել է 78 հոգի կամ ամբողջ աշակերտութեան 48%։ Երկրորդ տեղը բռնում է Թիֆլիսի թեմը 24 հոգի (15%). Երրորդը՝ Ղարաբաղի և Բեսարաբիայի թեմերը—ամեն մէկը—9 հոգի (6%). Աստրախանի թեմից եղել է 4 հոգի (3%). վերջին տեղը բռնում է Շեմախու թեմը, որ տուել է ընդամենը 2 սան (մօտ 1%)։

Համեմատելով սանների թիւը թեմերի հայ ազգաբնակութեան հետ, հետևեալ պատկերը կստանանք։

	Ազգաբն.	սաներ	հարիւր հազարին ընկնում է
Երևանի թ.	670/հ. *)	78	12
Թիֆլիսի թ.	375/հ.	24	7
Ղարաբաղի թ.	180/հ.	9	5
Շեմախու թ.	100/հ.	2	2
Աստրախանի թ.	60/հ.	4	7
Բեսարաբիայի թ.	50/հ.	9	18

Ցանկալի է ապագայում որոշ չափով հաւասարակշռութիւն պահպանել. ևս առաւել կարևոր է Տաճկաստանցիների և Պարսկաստանցիների թիւը աւելացնել, յիշելով, որ ճեմարանը կարող է լինել հայ հատուածների շաղկապման ամենաուժեղ գործոններից մէկը։

Սանների առաջադիմութեան արտաքին պատկերը եղել է հետևեալը.

	փոխել են, վերաք.	փոխել են, մնացել են,	հեռացել են.
Գ-րդ դաս.	10(41%)	4(17%)	5(21%)	5(21%)
Դ-րդ »	24(60%)	11(27%)	4(9%)	2(4%)
Ե-րդ »	11(31%)	14(40%)	3(9%)	7(20%)
Զ-րդ »	19(70%)	—	2(7%)	6(23%)
Ա-ին լսար.	7(40%)	—	—	11(60%)
Բ-րդ »	14(83%)	—	—	3(17%)
	85(52%)	29(18%)	14(9%)	34(21%)

Համեմատելով դասարանները, կտեսնենք, որ նրանք պատրաստականութեամբ իրար համապատասխան չեն եղել, որ մի հիմնական անբարեյաջող պայման խանգարել է դպրոցի կանոնաւոր ընթացքը։ Առաջադիմութիւն ցոյց է տուել աշակերտութեան մի

*) Տես Մխիթար վարդ. «Հայերը Ռուսաստանում»։

կէսը, միւս կէսը թոյլ է եղել, իսկ քառորդը արձակուել կամ հեռացել է։ Թուիչքները աւելի աչքի են ընկնում, երբ ամեն մի դասարան առանձին—առանձին ենք վերցնում, ինչպէս օրինակ երրորդ և հինգերորդ դասարանները և առաջին լսարանը։

Եթէ հաշուի առնենք անցած դասընթացի ծաւալը և աշակերտութեան մտաւոր մակերևոյթը՝ միայն ուսուցիչների ներդամտութեամբ կարելի է բացատրել 52%-ի փոխադրուելը և աւարտելը. հակառակ դէպքում առաջադիմողների թիւը հազիւ գերազանցէր 20—25%։

Սաների բաց թողած դասերի թւի մասին չկան լրիւ տեղեկութիւններ. յայտնի է միայն հիւանդութեան օրերի թիւը—783 օր, որ կազմում է 4%։

Հիւանդներ եղել են տարուայ մէջ 145 հոգի, որոնք բժշկուել են 783 օր. միջին թւով ամեն մի հիւանդ պառկել է հիւանդանոցում 5½ օր. մահուան դէպքեր չեն եղել։

Ըստ տեսակի հիւանդները ունել են հետևեալ թուերը.

Ճանճային տենդ	54	հոգի	37%	տոկոս.
Հիւանդ ձևացողներ	24	»	17%	»
Բգացաւ	17	»	12%	»
Արեան պակասութիւն	15	»	10%	»
Գլխացաւ	9	»	6%	»
Դեղնացաւ	5	»	3%	»
Հարբուխ	4	»	3%	»
Միւս հիւանդութիւններ (մի մի, երկու երկու դէպք)	17	»	12%	»
	145	հոգի	100%	

Աշակերտութեան ամենակատաղի թշնամին եղել է տենդը, որով վարակուած են եղել շատերը։ Հիւանդութեան զարգանալուն նպաստել են ջրերի առուները, բանջարանոցը ու բարդիները, որոնք մոծակի բուն են դարձրել շրջակայքը։ Հրաշք պիտի համարել, որ բոլոր աշակերտները չեն վարակուել ծանր տարափոխիկ հիւանդութիւններով. ամբողջ բակը ծածկուած է հակառողջական ձևով շինուած արտաքնոցներով, որոնց աղտեղութիւնները ապականել են գետինը և ջրհորները, որտեղից ստացւում է խմելու ու լուացելու ջուրը։

Տարուայ մէջ ուսանողուել են հետևեալ առարկաները. կրօն, ուսումն Ս. Գրոց, Հայոց եկեղեցական պատմութիւն, ընդհանուր եկեղեցական պատմութիւն, իսրայէլի գրականութեան պատմութիւն, կրօնների պատմութիւն, Հայոց եկեղեցական իրաւունք, Հայոց լեզու և գրականութիւն, Ռուսաց լեզու և գրականութիւն, գրականութեան տեսութիւն, ընդհանուր գրականութիւն, անգլիա-

կան գրականութիւն, Գերմաներէն, պատմութիւն Հայոց, Ռուսաց և ընդհանուր, աշխարհագրութիւն Հայաստանի, Ռուսաստանի և Եւրոպայի, թուաբանութիւն, հանրահաշիւ, երկրաչափութիւն, ֆիզիկա, տիեզերագրութիւն, կենդանաբանութիւն, մնատեսագիտութիւն, փիլիսոփայութեան պատմութիւն, իրաւագիտութիւն, հոգեբանութիւն, բարոյագիտութիւն և երգեցողութիւն։ Չեն աւանդուել այնպիսի կարևոր առարկաներ, ինչպիսին են՝ ներածութիւն և աստուածաբանութիւն նոր կտակարանի, բուսաբանութիւն, մարդակազմութիւն, ֆիզիոլոգիա, քիմիա, եռանկիւնաչափութիւն մանկավարժութիւն, նկարչութիւն, երաժշտութիւն, տաճկերէն և այլն. զուրկ են եղել սաները և ֆիզիքական կրթութիւնից՝ մարմնամարզութիւնից և շարժական խաղերից։ Իսկ ճեմարանի բանջարանոցը, դոմը, այգին, պարտէզը ու արտերը գիւղատնտեսական փորձնական դասերի ծառայելու և զուարճութիւն պատճառելու տեղ՝ դարձել են երեխայական զողութիւնների, ապտաութիւնների և հիւանդութիւնների բուն։

Ինչպէս և նախորդ 34 տարիները, ճեմարանի 35-րդ տարեշրջանն էլ չի ունեցել հաստատուն ծրագիր. ամեն ինչ եղել է պատահական. ամեն մի ուսուցիչ գործել է առանձին և առաջնորդուել է իր հայեացքներով և քմահաճոյքով կամ տեսչի ցուցումներով։

Ուսուցչական խումբը բաղկացած է եղել 12 հոգուց. նրանցից միայն չնչին մասը շարունակ մի քանի տարի ուսուցչութիւն է արել ճեմարանում։ Ինչպէս և ամենուրեք մեր դպրոցներում, ճեմարանում ուսուցչական կազմը յաճախ ենթարկուել է փոփոխութիւնների։ Այդպիսի պայմաններում ոչ մի դպրոց չի կարող բաւարար արդիւնքներ տալ։ Բացի այդ՝ ոչ թէ աւանդուելիք առարկաների համաձայն են հրաւիրուել դասատուներ, այլ առարկաները յաճախ նշանակուել են հրաւիրուած ուսուցիչների մասնագիտութեան համեմատ։ *)

Ուսուցիչների անկայուն դրութիւնը և հաստատուն ծրագրի բացակայութիւնը կախուած է եղել բազմաթիւ պատճառներից. չնչին վարձատրութիւն, կենսաթոշակի բացակայութիւն, տեսչի

*) Ինչ վերաբերում է ներկայ 1909|10 ուսում. տարուայ ուսուցչական խմբին, նա կազմել է արդիարդ աննպաստ պայմաններում։ Անցեալ տարուայ խումբը in corpore հրաժարուել էր. կարճ ժամանակում ընդամենը մէկ տասում անկարելի բան էր մի միջնակարգ եւ մի բարձրագոյն դպրանոցի լիակատար եւ անթերի ուսուցչական կազմ հաւաքել, որը մի շարք տարիների սիստեմատիկ ընտրութեան եւ զտման արդիւնք կարող է լինել, մանաւանդ մեզանում, երբ այնքան աղքատ ենք ժեռնիա եւ մասնագէտ դասատուներով։

պարտականութիւնների և իրաւունքների անորոշ լինելը և միւս կողմից նրանց չափազանց մեծ ծաւալը, ուսուցչական կազմի անսահման կախումը տեսչի բարեհաճութիւնից, աւանդուելիք առարկաների նշանակելու պատահականութիւնը, շրջապատող ծանր մթնոլորտը, կենսական տխուր պայմանները և այլն և այլն,—ահա, յիշեալ պատճառներից շատերը, որոնք խանգարել են ճիմարանի զարգացման։

Ըստ աւանդութեան ամեն դասարան ունեցել է իւր դասախարակը, որոնց գործունէութեան մասին չկայ ոչ մի տեղեկութիւն, և հազիւ դասախարակչութիւնը տար շօշափելի արդիւնք, քանի որ մշակուած հրահանգը այդ պաշտօնը զարգարել է լոկ վերացական պարտականութիւններով։

Տարուայ սկզբում և վերջում եղել են 3 վերակացուներ, իսկ մնացեալ ժամանակ մէկի մահից յետոյ՝ երկուսով են վարել այդ ծանր և պատասխանատու պաշտօնը—վերահսկել 150 աշակերտի վրայ։ Այդչափ վերակացուներով անկարելի է խուսափել զանցառութիւններից, առաւել որ չի եղել և տեսչի օգնական, և տեսուչը պարտաւոր էր միաժամանակ վերահսկել ուսումնական և տնտեսական մասերի վրայ, հոգալ ուսումնարանի և սանների բոլոր պիտոյքները, ղեկավարել մանկավարժական խորհուրդը և աշակերտութեան բարեկրթութիւնը։

Մանկավարժական խորհուրդը ունեցել է 34 նիստ, որոնցից 5 եղել են լսարանական և 29 դասարանական կամ խառն։

Բացի ուսումնական խնդիրներից՝ խորհուրդը զբաղուել է և Ա. Ղուկասեանի, Մեղուինեանի և բժ. Տիգրանեանի կլտակների գործադրութեան խնդրով։

Ուսուցիչները տարուայ ընթացքում հիւանդութեան և այլ և այլ պատճառով բացակայել են 161 ժամ կամ 36 աշխատաւոր օր։ Հաշուելով տարուայ մէջ 876 ուսուցչական աշխատաւոր օր, կտեսնենք, որ բաց թողած դասերը կազմում են 4%, որ մեծ չէ։ Ոմանք իրանց դասերից դուրս պարապել են 66 ժամ կամ 15 աշխատաւոր օր, այնպէս որ բաց թողած օրերի թիւը իջնում է 2%։

Մատենադարանի համար գնուել է և ստացուել է նուէր 385 կտոր գիրք, որոնցից 272 հատ գերմաներէն լեզուով, նուիրել է պ. Ս. Հախումեանը։ Մատենադարանը մատնուած է եղել կատարեալ անխնամութեան։ Թող, մաշուած պահարաններ, մաշուած ու պատռտուած կազմեր ու թղթեր, պակասաւոր հատորներ, մեծ քանակութեամբ անհետացած գրքեր, դասաւորութեան ու ցուցակագրութեան բացակայութիւն,—մի անբնական քաոս է պատկերացնում մատենադարանի ներկայ դրութիւնը։ Միայն շուտափոյթ վերաստուգութիւնը կարող է փրկել գրքերի այդ մի

ժամանակ հարուստ շեմարանը։ Այլ ուսումնական պիտույքներ, ինչպէս ֆիզիկանաց, կոլէկցիաներ և այլն, սկի գոյութիւն չունին։

Ճեմարանի անցեալ ուսումնական տարուայ տնտեսութիւնը դեռ չի պարզուած, իսկ հաշիւները ստուգուած ու փակուած չեն։ Բայց ընդհանուր տեղեկութիւնները և յատուկ դէպքերը բաւական մռայլ գոյներով են այդ պատկերացնում։ Հացը, լոյսը և բաղանիքը ըստ հին սովորութեան «բերքով» է տրուած՝ առանց վերածելու դրամի և առանց մուծելու մուտքի և ելքի մէջ, թէև նստել է մօտ 6500 բուրլի։

ՄՈՒՏՔ.

1. «Բերքով» մօտ	6500 ր.
2. Մ. Աթոռի գանձարանից	42,555 ր. 99 կ.
3. Մնացորդ 1907|8 թուականից	2905 ր. 72 կ.
4. «Լազարեան» անուան նպաստ	6000 ր. —
5. Պետերբուրգի եկեղեցիներից նպաստ	5000 ր. —
6. Թոշակ աշակերտներից և մանր նպաստ	2300 ր. —
7. Նուէրներ	1444 ր. 15 կ.
8. Պատահական մուտք	326 ր. 30 կ.
9. Բաց թողած ճաշերի վճար	1391 ր. 38 կ.
10. Ճեմարանի ագարակի մուտք	154 ր. —
11. 1908/9 թուի պարտք, մօտ	7000 ր. —
	75,577 ր. 44 կ.

ԵԼՔ.

1. 1907|1908 պարտք	14102 ր. 19 կ.
2. Ուսուցչական վարձ	14525 ր. —
3. Վարչութիւն	5480 ր. —
4. Ուսումնական պիտոյք, մօտ	400 ր. —
5. Դիւանական ծախք, մօտ	100 ր. —
6. Հիւանդանոց	1950 ր. —
7. Վերանորոգութիւն շինութեան	4700 ր. —
8. Ագարակ, բանջարանոց, դոմ	2800 ր. —
9. Աշակերտների ապրուստը և հագուստը	31520 ր. 50 կ.
	75577 ր. 44 կ.

Նախորդ տարիների պարտքը և բաց թողած ճաշերի վճարը հանած՝ ամեն մի սան մօտ 7½ ամսում (տօներին, ծննդեան և զատկին մօտ 50 աշակերտ 30 օրով գնացել են ծննդավայր) նստել է 400 բուրլի, մի պատկառելի թիւ, որի առաջ մարդ ակամայից կանգ է առնում, երբ չորս կողմը տեսնում է մրոտած, խարխուլ ու կեղտոտ, անհամապատասխան իրանց կոչման շինութիւններ, մերկ ու բորիկ սաներ, զուրկ մաքուր անկողնից, պիտակեղէնից, վերնազգեստից ու կօշկից, սպրտնած ու դեղնած, ինար երեխաներ, թէև ամեն մի սանի ապրուստը և հագուստը նստել է մօտ 200 ր., դասաւանդութեան հնացած գրքեր և այլն։

Այդ խոշոր գումարից առողջապահության վրայ ծախսուած է 3%, այն էլ համարեա ամբողջը կազմում է բժշկի ռոճիկը. դասական և գիտական պիտոյքների վրայ—0,6%, որից մեծ մասը հին տարիների պարտք է, զգեստի վրայ 6%. իսկ դասավարձը, որ պիտի կազմէր ուսումնարանի ամենաէական ծախսը, ընդգրկել է ընդամենը 24%։ Միևնոյն ժամանակ ծառաները ստացել են ռոճիկ և կերել են ծախսի մօտ 16%։

Ագարակը և գոմը, որոնց նպատակը պիտի լինէր մատակարարել ճեմարանին թարմ բանջարեղէն, արմտեղէն, կաթ, ձու և միս, միայն կլանել են մի խոշոր գումար՝ 2800 ր., որ պիտի համարել անդառնալի կորուստ, քանի որ ամբողջ եկամուտը եղել է ինչ որ 154 ռ. և քանի որ անգամ կաթը, ձուն կանաչեղէնը և արմտեղէնը դրսից է գնուած։ Ճեմարանը իր ագարակից ու գոմից ստացել է լոկ ճանճերի ու մոծակների վոնմակներ, անհամ դդումներ ու բազուկներ և հիւանդ տաւարի միս, որ խառնած սերկևիլի, քացախի և ջրի հետ տրուել է սաներին իբրև ապուր։

Վերանորոգութեան վրայ ծախսած է մի պատկառելի գումար՝ 4700 ր., բիւդջէի 8%, մինչդեռ ննջարանները և դասարանները իրանց կեղտոտ պատերով ու յատակներով ներկայացնում են ողորմելի տեսարան, մինչդեռ կան սենեակներ ու դասարաններ առանց վառարանի, չկան կանոնաւոր արտաքնոցներ, իսկ յատակներին տեղ-տեղ փլուելու վտանգ է սպառնում։

Սեպհական տնտեսութիւնը տուել է լոկ կրկնակի ու անիմաստ ծախսեր, միաժամանակ բարդել է վարչութեան վրայ անթիւ ու անհամար հոգսեր և առաջացրել է ուսումնական մասի խանգարում։ Փայտը գնուել է 60—75 ռուբլի տեղական սաժէնը (աւելի քիչ քան իսկականը), իւղը—20—24 ռուբլի փութը, այն էլ յաճախ ոչ արդար իւղ, այլ կեղծած ճարպով, մինչդեռ ամառը՝ կապալառուների միջոցով կարելի էր գնել՝ փայտը 35—40 ռուբլիով, մաքուր իւղը 15—17 ռուբլիով և այլն և այլն։

Ոչնչացնել ամեն տնտեսութիւն, բոլորը աճուրդով տալ կապալառուների ի հարկէ ոչ ուշ, քան ամառը—այդ է միակ փրկութիւնն կրկնակի ծախսերից և ուսման խանգարումից։ Այդպիսով վարչութեան կարուի միջոց ամբողջովին նուիրուել կրթական գործի, կվերականգնի հասարակական հաւատը դէպի ճեմարանը, կինայուի բաւականի գումար՝ վարձատրելու ուսուցչին համապատասխան իր կոչման ու թափած աշխատանքին և լիացնելու ուսումնական անյետաձգելի կարիքները։

Բարեկարգած տնտեսութիւնը, բարձր վարձատրութիւնը, որոշ կանոնները, կայուն դրութիւնը և խաղաղ կեանքը միայն կարող են ուսուցչին ու սանին սիրել տալ ճեմարանը։

Այլ կերպ ոչ ուսուցիչը, ոչ էլ սանը կըկապուի այդ տաճարի հետ. մէկը էլի իբրև մշանջենաւոր թափառական ամեն տարի նոր տեղեր կըփնտռի, ուր յոյս կունենայ լինել աւելի կուշտ ու հանգիստ, միւսը ճեմարանը կհամարի իբրև մի ազգային անկելանոց։

Միայն գորովով և սիրով կարելի է դրաւել դէպի ճեմարան ընտիր գիտական ուժեր և գիտութեան ծարաւով բռնուած մանուկներ ու պատանիներ։

Այդպիսի տարրերով է, որ ճեմարանը կարող է դառնալ հայ մտքի, հայացրած գիտութեան կենտրոն։ Միայն այդ միջոցով նա կըվերածուի այն հայ բարձրագոյն դպրոցի, որ կըմատակարարէ հայ եկեղեցուն կրթուած հոգևորականներ և ամբողջ հայութեան—ուսուցիչներ, կըմօտեցնէ հայ մասսային եւրոպական գիտութիւնը և կըշաղկապէ հայ հատուածները խօսքի ու մտքի ուժով։

Բարւոքել ճեմարանի տնտեսական դրութիւնը, պարզել ու հաստատ հողի վրայ դնել նրա բիւդջէն, լինի դա հոգաբարձութեան կամ մի այլ մարմնի միջոցով, ուսուցիչներին ապահովել կանոնաւոր յաւելումներով, կենսաթոշակով և բաւականաչափ ռոճիկով, անջատել իրարից դասարանական և լսարանական բաժինները, վերակազմել երկու մասն էլ կեանքի պահանջի համաձայն, տալ որոշ ու մշակած ծրագիր ու կանոնագրութիւն,—ահա այն կարդինալ խնդիրները, որոնք պահանջում են անյետաձգելի վճիռ։

Ինչ որ սակայն հետզհետէ կարելի է իրագործել։

Համառօտ տեղեկութիւն ճեմարանի անուան կտակած մի քանի գումարների.

1) Ա. Ղուկասեանի կտակի համաձայն Արտատանմանի ու Ռուսաստանի բարձրագոյն դպրոցներում 1908|9 թւին իրանց ուսումը շարունակել են եօթ հոգի, որոնցից վեցը աշխարհական և մէկը հոգևորական։ Կտակակատարների հետ ծագած տարաձայնութիւնների շնորհիւ, անկարելի է եղել տեղեկութիւններ ստանալ կտակի գործադրման մանրամասնութիւնների մասին։

2) Մեղուինեանի կտակի համաձայն որոշուել է տպագրել Հ. Երուանդ վարդապետի «Կրօնների պատմութեան դասագիրքը», որ լոյս է տեսել արդէն։

3) Բժ. Տիգրանեանի կտակած գումարի տոկոսների ծախսով որոշուել է տպագրել պ. Մ. Արեղեանի «Գրաբարի քերականութիւնը», պ. Ս. Կանայեանի «Ընդհանուր պատմութեան» դասագիրքը և պ. Մ. Սամուէլեանի «Թուաբանութեան» դասագիրքը. առաջինը և երրորդը արդէն լոյս են տեսել։

Պատասխանատու տեսչի՝ Մ. Ռոստոմեան